

**Alexandre Siranossian (avec la collaboration de Maxime K. Yevadian),
Les Métamorphoses de Tigrane. L'épopée Arménienne dans le Théâtre
Classique et l'Art Lyrique, Lyon, Sources d'Arménie, Tome I-II, 2014.**

ԺԶ. դարի վերջից մինչև ԺԹ. դարի կեսերը եվրոպական գրականության և օպերային արուեստում ստեղծուել են բազմաթիւ երկեր, որոնց մէջ հանդէս են եկել հայ հերոսներ, և գործողութիւնները կատարուել են պատմական Հայաստանում: Փոյթ չէ, որ հայկական դիպաշարով օպերաների բեմադրութիւններում անգամ դերակատարները կրել են ոչ թէ հայկական պատմական հանդերձանք, այլ եվրոպական արքունի հագուստներ, հայ արքաները ներկայացուել են բարձր կօշիկներով և կեղծամներով: Փոյթ չէ, որ հայ պատմական կերպարները սոսկ անուններով են եղել հայ, որ հեղինակները մեծ մասամբ տեղեակ էլ չեն եղել, թէ ինչ երկիր է Հայաստանը, և իրականում ովքեր են հայերը (աւելին, հանդէս են բերել մտացածին հայ պատմական դէմքեր), սակայն տուեալ դէպքում կարեւորը հայի և Հայաստանի բազմիցս յիշատակութիւնն է եվրոպացի հեղինակների ստեղծագործութիւններում, որոնք ընթերցուել և ոնկնդրուել են եվրոպական քաղաքակրթութեան խոշոր կենտրոններում:

Եւ ցարդ ասպարէզի վրայ չկար որեւէ համակարգուած հետազօտութիւն սոյն թեմայով, չնայած խնդրի վերաբերեալ հատուկետո ուսումնասիրութիւններ գրուել և հաղորդումներ կատարուել են արդէն Ի. դարի կեսերին¹: Ինչ վերաբերում է օպերային արուեստին, ապա դրանով առաջինը խորութեամբ զբաղուել է ֆրանսաբնակ երգահան Աւետիս Մետուենցը, որը երկու տարի Իտալիայի գրադարաններում և արխիւներում կատարած պրպտումների շնորհիւ երեան է հանել հայկական թեմաներով տասնեակ օպերաների ձեռագրեր:

Տիգրան Մեծի վերաբերեալ օպերաների յայտնաբերմամբ զբաղուել է նաեւ իտալահայ խմբավար Անջելօ Էֆրիկեանը: Սփիւռքահայ մամուլում տարբեր ժամանակներում Տիգրան Մեծի վերաբերեալ օպերաների մասին հաղորդումներով հանդէս են եկել պատմաբան Հրանդ Բ. Արմէնը, բանասէր Հայկ Քալանթարեանը, մեր օրերում երաժշտագետ Հայկ Աւագեանը²: Նրանց հրապարակումների շնորհիւ հայ մասնագէտները և արուեստասէր հանրութիւնը տեղեակ է դարձել, որ Տիգրան Մեծի մասին գրուել են տասնեակ օպերաներ, որ Պիեռ Կոռնէյի, Կարլօ Գոլդնիի որոշ թատերգութիւններում կան հայ կերպարներ, սակայն չափազանց գայթակղալից էր՝ իմանալ, որ նման ստեղծագործութիւնների թիւը հասնում է 640ի (380 երաժշտաստեղծի և բեմագրողի հեղինակութեամբ)...

Սոյն հրապուրիչ թեման ամբողջութեամբ ընդգրկելու գործին մեծապէս նպաստել է համացանցը, այնպէս որ գրքի ֆրանսահայ հեղինակները՝ նուազավար Ալեքսանդր Սիրանոսեանը եւ պատմաբան Մաքսիմ Եւադեանը, արդէն կարիք չեն ունեցել Մետամենցի պէս անձամբ գնալ տարբեր քաղաքների գրադարաններ ու արխիւներ, այլեւ դիմել են համացանցին:

Սիրանոսեանի եւ Եւադեանի պրպտումների արդիւնքում արդէն ծանօթ ստեղծագործութիւնների կողքին ի յայտ են եկել ժամանակի փոշու տակ մնացած հարիւրաւոր վէպեր, թատերախաղեր, երաժշտախաղ-օպերաներ (dramma musicale կամ dramma per musica, որ պատկանում են սերիա-օպերա սեռին), բալետներ, որոնցում կան հայ հերոսներ, հային ու հայկականին առնչուող բազում յիշատակումներ: Արդիւնքն ահա մի գրեթէ անծանօթ աշխարհ բացող այս երկու շքեղ հատորներն են՝ «Մեծն Տիգրանի Փոխակերպումները» աննախադէպ աշխատութիւնը՝ հրատարակուած Լիոնում գործող «Հայաստանի Սկզբնաղբիւրներ» կազմակերպութեան նախաձեռնութեամբ³: Այն արժէքաւոր է համակողմանիօրէն ներկայացուող փաստական հսկայական նիւթով, առաջին անգամ շրջանառութեան մէջ դրուող ուշագրաւ տեղեկատուութեամբ, մեկնութիւններով եւ 350 գումաւոր պատկերազարդումներով (դրանք, ըստ էութեան, բացում են մէկ այլ ոլորտ՝ եւրոպական կերպարութեամբ հայկական թեմաների անդրադարձը):

Ուշ միջնադարում ընթերցող եւ հանդիսատես լայն հանրութեանը ծանօթ յունահռոմէական առասպելաբանութիւնից եւ պատմութիւնից փոխառուած թեմաների հետ մէկտեղ ժամանակի եւրոպական հեղինակները պարբերաբար անդրադարձել են հայոց թագաւոր-թագուհիների շուրջ հիւսուած դիպաշարերին, գրել պատմական որոշ հիմք ունեցող եւ կամ կեղծ պատմական քնոյթի գործեր՝ գործողութիւնների վայր ընտրելով հելլենիստական կամ վաղըրիստոնէական Հայաստանը: Հիմնականում ֆրանսիացի, իտալացի, իսպանացի եւ գերմանացի թատերագիրները, վիպասանները հայոց մասին իրենց տուեալները քաղել են գլխաւորապէս հռոմէական սկզբնաղբիւրներից: Կատարուած ուսումնասիրութիւնից պարզուած է, որ յատկապէս մեծ թիւ են կազմում Տիգրան անուանուած հերոսները, որոնք ոչ միշտ են վերաբերում Տիգրան Մեծ արքայից արքային՝ յաճախ պատկերելով մտացածին, տարբեր երկրների թագաժառանգներ ներկայացնող Տիգրանների... Յատկանշական է, որ, ըստ ուսումնասիրողների, Տիգրանի մասին աւելի շատ օպերա է գրուել, քան որեւէ ուրիշ այլազգի արքայի:

Սիրանոսեանի եւ Եադեանի աշխատութիւնը ԺԷ.-ԺԹ. դարերի եւրոպական երաժշտական թատրոնի, օպերայի եւ թատերգութեան մի իլորդիակ հանրագիտարան է, որը տուեալներ է տրամադրում հարիւրաւոր հեղինակների մասին, տրում է ներկայացուող իրաքանչիւր ստեղծագործութեան գործող անձանց ցանկը, այնուհետեւ՝ համառօտ դիպաշարը գործողութիւն առ գործողութիւն, որից յետոյ յիշում են բեմադրութիւնները՝ թուականներով եւ վայրերով: Առաջին հատորը, որի վերնագրի թարգմանութիւնն է՝ «Հայկական հերոսապատումը դասական թատրոնում եւ քնարական արուեստում», բացում է երեք ներածական յօդաւածներով: Առաջինի հեղինակն է Քէօնի «Մուգիկա Անտիկա» համոյթի ղեկավար, նոագավար Ռայնհարդ Գեօրլը, որի նախաբանին հետեւում է գերապայծառ Լետն Ձեքիեանի «Հայերն Արեւմուտքում. մասնաւոր մի առնչութիւն» պատմական ակնարկը: Հեղինակը մասնաւորապէս կենտրոնացել է Իտալիայում հայկական ներկայութեան վրայ, մատնանշել հայ մշակոյթին յատուկ մի տարիմաստութիւն՝ մի կողմից խիստ պահպանողականութիւն, միւս կողմից՝ որոշ յեղափոխական կամ անիշխանական ոգի, ինչի շնորհիւ էլ հայութիւնը միշտ բաց է եղել նորի հանդէպ եւ պահպանելով ասանդոյթը՝ մշտապէս ձգտել է առաջընթացի: Երրորդ ներածութիւնը Ալեքսանդր Սիրանոսեանինն է, որը ներկայացրել է գրքի ստեղծման աշխատանքը, նախկինում սոյն թեմայի արծարծումները, սկզբնաղբիւրները, պատմական համապատկերը, ստեղծագործութիւնների դասակարգումը: Նա մասնաւորապէս պարզաբանել է, որ «Ոմանք մեզ յանդիմանել են, որ մեծ կարեւորութիւն չենք տուել երաժշտաստեղծներին: Սակայն այսպէս երաժշտութիւնը մեր աշխատանքի միակ նպատակը չէ: Իրականում հնարաւոր կապ գոյութիւն չունի այս օպերաների երաժշտութեան եւ հայ երաժշտութեան միջեւ» (Հտր. Ա., էջ 33), եւ այս առիթով թոռցիկ անդրադարձել ընդգրկուած ժամանակաշրջանից աւելի ուշ՝ Ի. դարում ստեղծուած հայապատում ստեղծագործութիւնների (սակայն, զարմանալիօրէն, ոչ օպերաների⁴):

Գրքի առաջին գլուխն է «Հայաստանը Կիւրոս Մեծի ժամանակներում»: Աքեմէնեան Պարսկաստանի այդ մեծ տիրակալին առանձին ներկայացնելը արդարացում է այն հանգամանքով, որ նրան նուիրուած գրական-երաժշտական գործերում մշտապէս հանդէս է բերում եւ նրա դաշնակիցը՝ հայոց Տիգրան Մեծ արքան: Մասնաւորապէս ներկայացուած է ԺԷ. դարի ֆրանսիացի գրողներ Մադլէն եւ Ժորժ դը Սկիւդերիների՝ 1649-1653ին հրատարակուած «Արտամէն կամ Կիւրոս Մեծ» վէպը (համարում է երբեւէ հրատարակուած ամենաճաւալուն արձակ գործը՝ 13095 էջ), որի հերոսներից է Տիգրան Մեծը: Այնուհետեւ

ժամանակագրական կարգով ներկայացում են 1665-1807 թթ. Կիրոսի մասին ստեղծումը այն գործերը (գործող անձանց ցանկով և համառոտ բովանդակությամբ հանդերձ), որոնցում առկա է նաև Տիգրանի կերպարը: Հայոց արքան հանդես է բերում նաև Կիրոսի յաջորդների վերաբերող երկու ստեղծագործության մեջ՝ Պիետրո Անտոնիո Բենարդինիի «Ասպասիա» ողբերգությունում (1697) և Լուի Դուհոյի «Հայաստանի իշխանները» վէպում (1774):

Երկրորդ գլխում՝ «Տիգրան Մեծի իմաստնությունը կամ Արտաշեսանների էպոպեան», հայոց միակ կայսրությունը ստեղծած թագաւորի վերաբերեալ մանրամասն տեղեկություններից յետոյ ներկայացում են ստեղծագործություններ, որոնց գործողությունները կատարում են Բուֆանիայի Թագաւորությունում, հանդես է բերում հայոց թագուհի (արքայադուստր) Լաողիկէն (Դոմենիկո Լալլիի «Նիկոմիդէս», Միքելե Ռիսպոլիի «Արսինտ»): Դրան հետեւում է «Տիգրան Մեծը՝ օպերաների հերոս» ենթագլուխը, որտեղ մանրամասն տրուած են 1710-1825 թթ. ներկայացում երաժշտական մի շարք ստեղծագործություններ, որտեղ հայոց արքան հանդես է բերում որպէս կենտրոնական կամ գլխաւոր հերոս, գործողությունները յաճախ տեղի են ունենում հայոց մայրաքաղաք Արտաշատում (Պիետրո Անտոնիո Բենարդինիի «Տիգրանը՝ Հայաստանի թագաւորը», անյայտ հեղինակի՝ երեք ծայնի համար գրուած կանտատը, որի հերոսներն են Տիգրանը, նրա կին Լաողիկէն, զօրավար Արասպը. գործում է նաև հայերի երգչախումբը են.): Տիգրանի մասին օպերա գրած երգահանների թում են համաշխարհային երաժշտութեան այնպիսի խոշոր դէմքեր, որպիսիք են Ալեսսանդրո Սկարլատտին (1659-1725), Անտոնիո Վիալդին (1678-1741), Եոհան Ադոլֆ Հասեն (1699-1783), Քրիստոֆ Բիլիբարդ Գլիլլը (1714-1787) և այլք:

Թէև գրախօսուող հատորի հեղինակները չեն նշել, սակայն յիշենք, որ Տիգրանի կերպարն առկայ է նաև Վոլֆգանգ Ամադէուս Մոցարտի (1756-1791)՝ 15ամեայ հասակում գրած «Պոնտոսի արքայ Միրդատը» օպերայում: Կարելոր է նաև նկատի ունենալ, որ այդ ստեղծագործություններում հայոց արքայի կերպարը մեծ մասամբ սխալ է ներկայացուել, և դա՝ Տիգրանի մասին եւրոպական սկզբնաղբիւրի՝ յոյն պատմիչ Պլուտարքոսի մեղքով, որը միտումնաւոր կերպով վատաբանել է հայ արքային:

Երրորդ գլուխը վերնագրուած է «Զննութեան, հպարտ Հոռոմաիստը և արքայազն Տրոպտը»: Հոռմէացի պատմիչ Տակիտոսի «Տարեգրություններում» տեղ է գտել Ք.ա. Ա. դարում ապրած հայոց թագուհի Զննութայի պատմութիւնը, թէ ինչպէս նա իր ամուսին Հոռոմաիստի գահընկեց լինելուց յետոյ նրա հետ փախուստի է դիմել:

երկիւղելով, որ հայոց նոր թագաւոր Տրդատ Ա.ն գերութեան կը վերցնի իրեն՝ յոյ Ձեներփան խնդրել է Հռադամեսին՝ վերջ տալ իր կեանքին: Վերջինս նրան սրով հարուածել է եւ նետել Արաքս գետը, բայց թագուհին ողջ է մնացել. հովիւները ջրից հանել են եւ տարել Տրդատի մօտ, որը, սակայն, պատուով ու յարգանքով է ընդունել նրան: Այս ողբերգական պատմութիւնը բազմիցս արտացոլուել է եւրոպական երաժշտութեան, գրականութեան եւ նկարչութեան մէջ: Յատկանշական են Տոմազօ Ալբինոնիի «Հռադամիստ եւ Ձեներփա» (1698), Լուկ Անտոնիօ Պրեդիերիի «Ձեներփա» եւ Գէորգ Ֆրիդրիխ Հենդլի (1685-1759) «Հռադամիստ» օպերաները. հայոց թագուհու դերերգը կատարել են հռչակաւոր երգչուհիներ անգլուի Անաստասիա Ռոբինսոնը (1692-1755) եւ իտալուի Կատարինա Գաբրիէլլին (1730-1796): Գրական գործերից յիշարժան է Պրոսպէր ժոյիօ Կրեբին-աագի «Հռադամիստ եւ Ձեներփա» ողբերգութիւնը, որի բեմադրութեան մէջ հայոց թագուհուն մարմնատրել է ֆրանսիացի հռչակաւոր դերասանուհի Ադրիէն Լըկուվրօրը (1692-1730): Աշխատութեանն առանձնակի շուք են տալիս Ձեներփային պատկերող եւրոպացի գեղանկարիչների եւ քանդակագործների (Ֆրանչեսկօ Ալբերի, Ժան Էսպրի Մարսլլէն, Վիլլիամ Ադոլֆ Բուժըրը) գործերի վերատպութիւնները (նոյն դիպաշարով կտաներ են ստեղծել նաեւ Նիկոլաս Պուսսէնը, Ֆելիքս-Անրի Ջակոմոտտին, Պոլ-ժաք-Էմէ Բոդրին, Լուիջի Սաբատելլին. այդ գործերը, սակայն, չեն արտացոլուել սոյն հատորում):

Արտաշէսեանների հարստութեան ժամանակաշրջանի Հայաստանի այլեայլ դրսեւորումներին է վերաբերում աշխատութեան չորրորդ գլուխը՝ «Հայաստանը Պարթեաստանի եւ Հռոմի միջեւ»: Այստեղից տեղեկանում ենք, որ ֆրանսիական գրականութեան մեծանուն դէմքերից մէկի՝ Վոլտէրի «Փառքի տաճարը» պատմական օպերա-բալէտի (երաժշտութիւնը՝ Ժան-Ֆիլիպ Ռամոյի) գործողութիւնները կատարում են հայոց Արտաշատ մայրաքաղաքում, գլխաւոր հերոսը հռոմեական կայսր Տրայանոսն է: Նոյն ժամանակաշրջանը պատկերող մի շարք օպերաների հերոսուհի է եղել նաեւ Հայաստանի արքայադատր Բերենիչէն (Բերենիս, նոյնինքն՝ Վերոնիկա), յօրինովի, սակայն դրական մի կերպար (Բարտոլոմէօ Վիտտորիի «Բերենիչէ», Ապոստոլօ Ձենոյի «Լուկիոս Վերոս» են.): Առհասարակ, պատմական մասնակի յենքով եւ կեղծ պատմական ստեղծագործութիւններին բնորոշ է մտացածին հերոսների կերտումը, եթէ նրանք մինչեւ անգամ թագաւորներ ու թագուհիներ են: Այսպէս, Ջովաննի Բատիստա Վոլպէի «Ռոզիլենա» երաժշտախաղի (1664) հերոսներից է Հայաստանի երիտասարդ թագաւոր Օրմոնդօն (Հտր. 2, էջ 17), Պիետրօ Անտոնիօ Բեննարդոնիի «Իրենէ» ողբերգութեան (1695) հերոսներից է հայ իշխան

Իդրասպէն (Հտր. 2, էջ 24): Յատկանշական է, որ այս դարաշրջանում հեղինակները միմեանցից փոխ են առել շատ պատմական անուններ՝ երբեմն ձեափոխելով դրանք: Այսպէս, նշուած Իդրասպէի անունը փոքր-ինչ փոխուած կրում է Ջովաննի Կարլո Պագանի Չեզայի «Իդասպէ» հերոսական դրամայի (1751) համանուն հերոսը, որը Պարսկաստանի հայազգի իշխան է, որն էլ վերոյիշեալ «Մարիամնէ» ստեղծագործութեան հայազգի հերոսի պէս հանդէս է գալիս Արսաշէ (Արշակ) անուամբ (Հտր. 2, էջ 149), են.:

Քրիստոնէութեան արշալոյսի Հայաստանը ես չի վրիպել երոպացի հեղինակների տեսադաշտից: Հինգերորդ՝ «Աստուածաշնչեան Պատմութեան Թատրոնը», գլուխը ներկայացնում է հայազգի վկայ Պողիկտոսի վերաբերեալ թատերա-երաժշտական գործերը, որոնց հեղինակների թում են երկու մեծանուն երաժշտաստեղծ՝ իտալացի Գաէտանօ Դոնիժետտին (1797-1848) եւ ֆրանսիացի Շարլ Գունօն (1818-1893), ինչպէս նաեւ Կրիստոբալ Դէ Մոնրօ Ի Սիլվայի «Սուրբ Բարթոլոմիճոսը Հայաստանում» թատերգութիւնը, Մատտէօ Նորիսի «Դիոկղետիանոս»ը, նաեւ Գրիգոր Լուսատրչի եւ Տրդատ Բ. արքայի պատմութիւնը ներկայացնող միջանի երկ:

Վեցերորդ գլուխն է «Տիգրանի Փոխակերպումները», որտեղ մասնատրապէս խօսում է վնեւտիկեան մշակոյթում Տիգրան արքայի կերպարի դրսեւորումներին՝ որպէս պատմական, այնպէս էլ՝ մտացածին կերպար (Ֆրանսիս Բոմնի եւ Ջոն Ֆլեչչրի «Թագաւոր եւ ոչ թագաւոր», Ուքալո Մարիի «Եւրիմեդոն կամ Փառաբանուած ծովախէնը» ողբերգակատակերգութիւնները, Ջովաննի Ֆաուտինիի «Դորիկլէա», Անտոնիօ Պապիի եւ Ջովաննի Բատիստա Բորգիի «Ալեքսանդրը Հայաստանում» օպերաները): Յաճախ Տիգրան անունը հեղինակների չիմացութեան պատճառով գործածուել է այլ ազգութեան հերոսների համար. օրինակ, Աուրելիօ Աուրելիի «Ռոզանէ, Ասորեստանի կայսրուհին» երաժշտախաղում Տիգրանը պարսկական քանակի զօրավար ափրիկեան արքայազն է (էջ 259), իսկ Ջովաննի Բատիստա Ներիի «Էրիֆիլէ» գործում՝ Կիպրոսի արքան (էջ 275):

Եւ վերջապէս եզրափակիչ՝ եօթերորդ գլուխը («Իշխան-վաճառականների հագուստը»), ներկայացնում է Իտալիայի հայ առեւտրական գերդաստաններին (Միլման, Շերիման, Սերպոս), թէ ինչպէս է նրանց հագուստը մուտք գործել եւրոպական արուեստ (յայտնի է Լիոտարի՝ «Ժան-Ժաք Ռուսօն հայկական հագուստով» գեղանկարը): Յատկապէս թանկարժէք քարեր վաճառող հայ առեւտրականի կերպարը յաճախադէպ է ուշ-միջնադարի եւրոպական գրական-թատերական երկերում (Դէ Պարադի Դէ Մոնկրիֆի «Ալիքսի եւ Ալեքսիսի մշտական սերը» սիրավէպը, Գոլդոնիի «Կանանց

շաղակրատութիւնը» պիտը): Որոշ կերպարների դէպքում էլ նշուել է, որ նրանք հայկական հագուստով են (Պոլ Սկարոնի «Դոն Յաբէթ Հայաստանցին», Սիլվիո Ստամպիլիայի «Պարտենուպէն» են.): Ի դէպ, այս գլխում տեղեկանում ենք նաեւ բալետային արուեստին առաջին անգամ առնչուած հայորդու մասին, որը եղել է Վենետիկի Սեդրոսեան ազնուական ընտանիքի գաւակ, ականատր պարող եւ պարադիր Դոմենիկո Սերպոսը, որը բեմադրել է տասնեակ բալետներ եւ գործակցել ժամանակի այնպիսի մեծանուն երգահանների հետ, որպիսիք էին Ջոակինո Ռոսսինին եւ Լուիջի Քերուպինին (էջ 291):

Աշխատութեան երկրորդ հատորը («Անձինք եւ նրանց ստեղծագործութիւնները» ենթավերնագրով) ընդգրկում է առաջինում տեղ գտած հարուստ տեղեկատուութեան դասակարգումները՝ հեղինակների կենսագրականները, ստեղծագործութիւնների ժամանակագրութիւնը, մատենագիտութիւնը, ինչպէս նաեւ մի շարք ցանկեր՝ գրողների, երգահանների, պարադիրների եւ նրանց ստեղծագործութիւնների, նաեւ կերպարների, ինչի շնորհիւ դիւրին է դառնում հեղինակների կամ երկերի որոնումը:

Գրքում տեղ են գտել ոչ միայն ներկայացուած պատմական համապատկերին առնչուող նկարներ (քանդակներ, մանրանկարներ, քարտէզներ, պատմական առարկաներ) եւ ներկայացուած գրական-երաժշտական գործիչներին ու երկերին առնչուող կերպարուեստի գործեր, այլեւ տուեալ ստեղծագործութիւնների մերօրեայ բեմականացումների լուսանկարներ: Ժամանակակից բեմադրութիւնների տեսարաններ են զարդարում նաեւ զոյգ հատորների կազմը՝ ընթերցողին ասես յուշելով, որ գիրքը վերաբերում է ոչ միայն անցեալին պատկանող թեմաների, այլեւ շարունակական մի երեւոյթի: Յիրաւի, այս կոթողային հրատարակութիւնը քիչ ծանօթ մշակութային մի մեծ շերտի վերհանում է, որի երեսն գալով՝ մի հսկայական քար է աւելանում հայագիտութեան բարձրաբերձ որմին...

Ի պատիւ հեղինակների պիտի ասել, որ նման ծովածալ նիւթում նրանք, որքանով տեսել ենք, թոյլ չեն տուել անճշտութիւններ. միակը, որ կարող ենք նշել, 1668ին Լվովում գրաբարով ստեղծուած «Մարտիրոսութիւն Սրբոյ Հռիփսիմէայ» թատերախաղը լեհահայ գործիչ Նիկոլ Թորոսովիչին սխալմամբ վերագրելն է (էջ 237): Յայտնի է, որ այդ երկի հեղինակը եղել է ֆրանսիացի կրօնատր Ալիոս Պիդոն: Նման աշխատանքում չեն բացառում նաեւ վրիպումները. օրինակ, կարելի էր յիշատակել նաեւ Գայտանօ Դոնիծետտիի «Կատերինա Կորնարօ» օպերան՝ նուիրուած Հայաստանի թագուհու տիտղոսը վերջին անգամ կրած վենետիկցի ազնուականուհի Կատերինա Կորնարօ Լուսինեանին (1454-1510):

Անշուշտ, խելամիտ չի լինի նաեւ նման հսկայական թեմա մշակողներից ակնկալել նիւթի ամբողջական սպառում: Կարելի է տոյն նիւթը լրացնել բազմաթիւ օժանդակ տուեալներով, յատկապէս երբ խօսքը վերաբերում է տոյն գործերի արծագանգներին եւրոպական մշակոյթի, մասնատրապէս գրականութեան մէջ: Այսպէս, Պրեդիէրիի «Ձեռքբիա» օպերայի բեմադրութիւններից մէկի նկարագրութիւնը ԺԸ. դարի Վիեննայի Արքունական Թատրոնում ներկայացրել է ֆրանսիացի նշանաւոր վիպասանուհի Ժորժ Սանդն իր «Կոնսուելօ» վէպի Բ. հատրում: Վէպի հերոսուհին՝ երգչուհի Կոնսուելօն, կատարում է Ձեռքբիա թագուհու դերը, վէպի հերոսներից Կաֆարիէլօն՝ Տրդատ թագաւորի, իսկ օպերայի գործողութիւնները կատարում են «Հայաստան աշխարհում, հրաշալի Արաքսի ափին»: Ի դէպ, «Հռադամիստ եւ Ձեռքբիա» է կոչուել նաեւ ռուս գրող Ալեքսանդր Գրիբոյեդովի անաւարտ մի թատերախաղը: Եւ կամ, Դոնիժետտիի «Պողիկտոս» օպերայի առաջին բեմադրութեան առաջին յիշատակութիւնը հանդիպում ենք ֆրանսիացի գրող Ստենդալի «Պարմի մենաստանը» վէպում, գրուած օպերայի ստեղծման տարում՝ 1839ին: Վէպի հերոսուհին՝ իտալացի դքսուհի Ջինա Սանսետերինան, մի առիթով ասում է. «*Ես համոզուած եմ, որ եթէ մի նոր Դեկոս կայսր գար աշխարհի, արքեպիսկոպոսը յանձն կ'առներ նահապակուել, ինչպէս Պոլիկտոսն այն օպերայում, որ անցած շաբաթ ներկայացրին այսօրեդ*»⁵: Եւ որքան էլ կատարուած աշխատանքը անմիջական կապ չունենայ հայ իրականութեան հետ, դարձեալ տոյն հատրում հնարաւոր է գտնել հայ մշակոյթին առնչուող տարբեր փաստական մանրամասներ, որ կարող են առիթ տալ ւաւելի խոր ուսումնասիրութեան: Այսպէս, Սիրանոսեանն իր առաջաբանում վկայել է, որ, համաձայն Վենետիկի Մխիթարեանների բանաւոր վկայութեան, Դոնիժետտին «Պողիկտոս»ը գրելու ժամանակ այցելել է Սուրբ Ղազար կղզի՝ ծանօթանալով հայ պատարագի ասանդական երգերին, եւ որ նման տեղեկութիւն կայ Ջուզեպպե Վերդիի վերաբերեալ, երբ նա գրելիս է եղել իր հոչակաւոր «Աիդան»⁶ (Հտր. Ա., էջ 33): Վկայութիւններ, որ սպասում են նեղ մասնագէտների հետազօտութեանը եւ վերլուծութեանը...

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Խորհրդահայ գիտական մամուլում հրապարակումներ են կատարել բանասէրներ Վահրամ Թերզիբաշեանը եւ Էլիզ Պետրոսեանը (Վ. Թերզիբաշեան, «Հայ Թեմաները Համաշխարհային Գրականութեան Մէջ Հարցի Շուրջը», *Տեղեկագիր ՀՍՄԻ Գիտութիւնների Ակադեմիայի, Հասարակական Գիտութիւններ*, 1946, թիւ 6, էջ 55-80. նոյնի՝ Հայ

Դրամադրոգիայի Պարմուքին 1668-1868, Երևան, Հայպետհրատ, 1959, էջ 247: Է. Պետրոսյան, «Կլասիցիզմի Շրջանի Հայ-Ֆրանսիական Գրական Կապերի Շուրջը», *Տեղեկագիր ՀՍՄԻ Գիտությունների Ակադեմիայի, Հասարակական Գիտություններ*, 1946, թիւ 7, էջ 51-67):

² «Համառոտ Մատենագիտութիւն՝ Հայկական Դէպքեր Ու Դէմքեր Բովանդակող Օտար Օփերաներու», պատրաստեց՝ Հայկ Աագեան, *Շիծենակ, Եռամսեայ երաժշտական Յանդուած Զահակիի Շարաքաթերթի*, Ա. տարի, թիւ 1, Յունտար 2001, Գահիրէ, էջ 4-9:

³ Գրքի հայաստանեան շնորհանդէսը կայացել է 2015ի Ապրիլի 26ին, Սպենդիարեանի Անուան Օպերայի եւ Բալէտի Թատրոնում, որի ժամանակ ելոյթ ունեցան թատրոնի տասներեք մենակատարներ՝ կատարելով գրքում տեղ գտած օպերաներից առանձին մեներգեր եւ զուգերգեր: Հետաքրքրական է, որ այդ երգերից միջանիսը կատարում էին պատմութեան մէջ երկրորդ անգամ՝ կատարուած լինելով առաջին անգամ ԺԷ. կամ ԺԸ. դարում, տուեալ օպերայի առաջին եւ վերջին քննադրութեան ժամանակ...

⁴ 20րդ դարում ես, թէեւ օպերային սեռը որոշ առումով նահանջ է ապրել, յայտնի են հայկական թեմաներով օպերաների ստեղծման փաստեր: Ա. Աշխարհամարտի օրերին իտալացի երեք երաժշտասէրներ՝ քիչլէ Ջուզեպպէ Կոնիլիօն, երգահան Ձեպպին եւ տիկին Ջուզեպինա Կաստիլին, կարդալով իտալական մանուկում տպագրուած «Եօթ կոյսերի հերոսական վախճանը Ախուրեանում» նիւթը, ձեռնամուկս են եղել այդ նիւթով օպերայի ստեղծմանը: Նրանք գրել են մէկ գործողութեամբ եւ երկու պատկերով «Մարիամ» օպերան, որի հերոստիկները Եօթ հայուհիներ են: 1970ականների սկզբին «Մարիամ» օպերայի պարտիտուրը փոխադրուել է Հայաստան: 1955ին ռումին կոմպոզիտոր Գ. Դումիտրեսկուն ստեղծել է «Հոսպոդար Եոն Ահարկու» ժողովրդական երաժշտական դրաման: Հերոսն է ԺԶ. դարի հայազգի ռումինական պետական գործիչ, Մոլդովայի Հոսպոդար Եոն հայը (Արմենաուլ, Ահարկու): Օպերայի լիբրետոն գրել է Գ. Թէոդոսկուն՝ ռումին գրող Լ. Ֆուլգայի համանուն թատերախաղի հիման վրայ: Այն ներկայացուել է Բուխարեստի օպերային թատրոնում, Եոն իշխանին մարմնաւորել է ռումինահայ բարիտոն, Ռումինիայի ժողովրդական արտիստ Դափթ Յովհաննիսեանը, իսկ մի տեսարանում քանակայինները երգում են, որ իրենք հայի քանակից են (Ս. Է. Քոլանջեան, «Հայազգի Գործիչների Մասնակցութիւնը Միջնադարեան Մոլդովայի եւ Վալաքիայի Ժողովուրդների Հակասամանեան Պայքարին (XV-XVIII դդ.)», *XVI-XVIII Դարերի Հայ Ազգագրական Շարժումը եւ Հայ Գաղթավայրերը*, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ, 1989, էջ 68): 1957ին չեխ երգահան Եոզէֆ Մատելը (1922-1992) օպերայի է վերածել Ֆրանց Վերֆելի *Մոսա Լեբան Բառասուն Օրը* նշանատր վէպը: 1993ին ներկայացուել է նաեւ Երեւանում (Դանիէլ երաժիշտ, «Մոսա Լեբան Բառասուն Օրը» Օպերան», *Գեղարուեստ*, 1993,

Յունիս): Այս մասին տես մեր յօդուածում (Արծուի Բախչինեան, «Հայկական Թեմաները Համաշխարհային Օպերայում», *Հայրենիքի Ձայն*, 25, 02, 1993):

⁵ *La Chartreuse de Parme de Stendahl* (Henry Beyle), Paris, Michel Lévi Frères, Libraires éditeurs, 1864, էջ 123. հմմտ.՝ Ստենդալ, *Պարմի Մենաստանը*, Երևան, Հայպետհրատ, 1961, էջ 169:

⁶ Լրագրային մեր մի հրապարակման մէջ տոյն տուեալը նշուած չէ (Արծուի Բախչինեան, «Վերդիի 'Աիդան' եւ Հայերը», *Հայրենիքի Ձայն*, 19-05-1993, նոյնը բովոլարերէն՝ Operata «Aida» na velikiya Verdi i armencite, *Երևան*, 28.10.1993):

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ
artsvi@yahoo.com